ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ
«ԴԱՇՏԱՔԱՐԻ «ԳՏՆՎԱԾ ԵՐԱԶ» ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնք
Դաշտաքար 4-րդ փողոց 2/1, dashtaqarpartez@mail.ru, հեռ. 093-555-223

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԴԱՇՏԱՔԱՐԻ «ԳՏՆՎԱԾ ԵՐԱԶ» ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՏՆՕՐԵՆ՝ Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ

29.08.2025թ

Հավելված
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
«12» 07. 2022թ. N 1275-Ա/2 հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կազմակերպության անվանումը՝ «Դաշտաքարի «Գտնված Երազ» նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
Կազմակերպաիրավական տեսակը՝ ՀՈԱԿ /ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ/

Սեփականության ձևը՝ Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
Հասցե՝ Արարատի մարզ, Վեդի համայնք, Բնակավայր Դաշտաքար 4-րդ փողոց 2/1
Հեռ.՝ 093-555-223
Էլ. փոստ ՝ dashtaqarpartez@mail.ru
https://www.spyur.am/am/companies/dashtakar-gtnvats-yeraz-preschool-educational-institution/56702/
https://www.facebook.com/profile.php?id=100090416916018&mibextid=D4KYlr

II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐԵՐ

Հաստատությունն իր ներքին գնահատումն իրականացնելիս պետք է առաջնորդվի ստորև բերված հարցաշարերով.

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՎՏԱՆԳ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

Ցուցանիշ	Այո	Մասամբ	Ոչ
ա. ուսումնական հաստատությունն ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից.	✓		
բ. ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սաների ազատ տեղաշարժման համար.	✓		
գ. արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ ուսումնական հաստատության շենքին.	✓		
դ. ուսումնական հաստատության տարածքը մաքուր է, աղբը կանոնավորապես հավաքվում է հատուկ աղբարկղերում և դուրս է բերվում հաստատության տարածքից.	✓		
ե. ուսումնական հաստատության ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝ կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ.	✓		

«ա», «բ» չափանիշների համար անհրաժեշտ է իրականացնել դիտարկում-փաստագրում և արձանագրել հաստատության շենքի ֆիզիկական վիճակը: «ե» չափանիշի համար պետք է հիմք ընդունել հաստատության կողմից համապատասխան կազմակերպությունների (ախտահարման-կանխարգելման, արտակարգ իրավիճակների ծառայության) հետ կնքված պայմանագրերը: Սույն աղյուսակը լրացնելիս ներքևում պետք է նշվի նաև համապատասխան փաստաթղթերի առկայության և գործողության ժամկետների, այդ թվում՝ պայմանագրերի, կատարման մասին:

«Դաշտաքարի «Գտնված Երազ» նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից: Ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սաների ազատ տեղաշարժման համար: Հիմք ընդունելով «Արարատի Կանխարգելիչ ախտահանում դուստր» ՓԲԸ հետ 03.01.2025թ. կնքած N 61 պայմանագիրը՝ հաստատության ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝ կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ:

2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԱՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

(ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով սահմանված՝ անվտանգության և առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերը)

Ցուցանիշ	Այո	Մասամբ	Ոչ
ա. ուսումնական հաստատության շենքը վերանորոգված է.	✓		
բ.ուսումնական հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով սահմանված շահա-գործման անվտանգության նորմերին.	✓		
գ. շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր.	✓		
դ.ուսումնական հաստատությունն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով.	✓		
ե.շենքը հարմարեցված է կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԶԱՊԿ) ունեցող սաների անվտանգ տեղաշարժ ապահովող պայմաններին (թեքահարթակներ, լայն դռներ և այլն).	✓		
զ. ուսումնական հաստատությունն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային անվտանգության լրակազմով, տանիքը պատված է հրակայուն նյութերով.	✓		
է.համակարգչային սարքավորումները, հեռուստացույցներն ամուր են տեղադրված և ամրացված են աշխատատեղերին.	✓		
ը. անիվներով տեղաշարժվող ծանր իրերն ամրացված են հատակին.	✓		
թ. բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները դեկորատիվ իրերը.	✓		
ժ. ուսումնական հաստատության միջանցքների հատակները սայթաքուն չեն, իսկ եթե ծածկված են ուղեգորգերով, ապա դրանք ամրացված են հատակին.	✓		
ժա. ստորին հարկերի պատուհաններն ունեն շարժական մետաղյա վանդակաճաղեր.			✓
ժբ. ուսումնական հաստատության կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է.	✓		

ժգ. ուսումնական հաստատությունում մշակված և առկա է սաների ու անձնակազմի տարհանման պլան, որում հաշվի են առնված նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները.	✓		
ժդ. ուսումնական հաստատության նախասրահում, բոլոր հարկերում, խմբասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով.	✓		
ժե. ուսումնական հաստատության տարհանման ուղիներն ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով.		✓	
ժզ. ուսումնական հաստատությունում սաների թիվը համապատասխանում է հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին.	✓		
ժէ. խմբասենյակներում սեղան և աթոռների թիվը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված նորմերին.	✓		

«ա»-ից «դ» չափանիշները դիտարկելով՝ հանձնաժողովն ազատ շարադրանքով պետք է նկարագրի հաստատության տարածքի, շենքի ու շինությունների, գույքի անվտանգ շահագործման, սաների և աշխատակիցների անվտանգ կենսագործունեության ապահովման և առողջության պահպանման հետ կապված վիճակը և առկա խնդիրները: Դիտարկման շրջայց կատարելիս հանձնաժողովը պետք է նկարագրի առկա իրավիճակը և արձանագրի բացահայտված շեղումներն ու անհամապատասխանությունները: Դիտարկում-փաստագրումն իրականացնելիս հաստատությունը պետք է առաջնորդվի համապատասխան նորմատիվային և իր ներքին փաստաթղթերով:

«ա» չափանիշի համար անհրաժեշտ է իրականացնել դիտարկում-փաստագրում և արձանագրել հաստատության շենքի ֆիզիկական վիճակը ու նշել, թե ինչպիսի վերանորոգման կարիք ունի այն՝ կապիտալ, մասնակի կամ ընթացիկ: Այնուհետև ցանկալի է մանրամասնել վերանորոգման կարիքները և տալ դրանց մոտավոր ֆինանսական գնահատականը:

«բ» չափանիշի համար դիտարկում-փաստագրման միջոցով պետք է արձանագրել, թե արդյոք շենքը կայուն է հետևյալ վտանգների կամ դրանցից որևէ մեկի ազդեցության նկատմամբ (ուժեղ քամիներ, սողանքներ, երկրաշարժեր, հրդեհներ, խոնավություն և այլն):

«ժբ»- ից «ժե» չափանիշների համար ևս պետք է իրականացնել դիտարկում-փաստագրում և հաջորդիվ անդրադառնալ սաների և աշխատողների տարհանման խնդիրներին: Կցել տարահանման պլանի լուսապատճենը:

«ժզ» չափանիշի համար կցել լիցենզիայի լուսապատճենը և լրացնել ստորև բերված աղյուսակը:

«Դաշտաքարի «Գտնված Երազ» նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը նորակառույց է, շենքը շահագործման է հանձնվել 2019թ-ին:
Շենքի շահագործումը համապատասխանում է քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով սահմանված շահագործման անվտանգության նորմերին: Այն կայուն է վտանգների նկատմամբ: ՆՈՒՀ ՀՈԱԿ--ի շենքում բոլոր դռները այդ թվում պահուստային ելքեր դեպի դուրս են բացվում: Ուսումնական հաստատությունն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով: Հաստատության կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և լավ վիճակում է: ՆՈՒՀ ՀՈԱԿ-ում մշակված և առկա է սաների ու անձնակազմի տարհանման պլան, որում սահմանված կարգով հաշվի են առնված նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները: Նախասրահում, խմբասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային

ցուցասյաքներով: Ուսումնական հաստատության տարհանման ուղիները ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա N 0852

Սույնով վավերացվում է, որ

«Դաշտաքարի «Գտնված երազ» նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ

(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

Մարզ Արարատ, համայնք Վեդի, գյուղ Դաշտաքար 4-րդ փողոց 2/1

(գտնվելու վայրը)

Մարզ Արարատ, համայնք Վեդի, գյուղ Դաշտաքար 4-րդ փողոց 2/1

(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

նախադպրոցական կրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ *Ժ. Անդրեասյան*

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

06 *հուլիսի* 2023 թ.

Անժամկետ

(լիցենզիայի գործողության ժամկետը)

ՍԵՐԻԱ ՆԽԴ N 000144

Խմբասենյակ	Խմբասենյակի մակերեսը (քմ)	Մեկ սանին բաժին ընկնող մակերեսը (քմ)	Նորմերից պակաս կամ ավելի մակերեսը (քմ)
2	2x50,68	1,58	-

Վերլուծել խմբասենյակում մեկ սանին բաժին ընկնող մակերեսին վերաբերող իրավիճակը, կատարել եզրահանգումներ և առաջարկել հիմնախնդիրների լուծման ուղիներ:

«Դաշտաքարի <<Գտնված Երազ>> նախադպրոցական ուսումնական հաստատություն» <u>ՅՈԱԿ-ի երկու խմբասենյակներում մեկ սանի բաժին է ընկնում 1,58/քմ :</u>



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Ր N 002
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՍԵՐԻԱ Ա N 0852 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ

«Դաշտաքարի «Գտնված Երազ» նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը)

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «14» նոյեմբերի 2024 թվականի N 2115-Ա/2 հրամանին համաձայնությամբ իրավունք ունի կրթական գործունեություն իրականացնել հետևյալ պայմաններով.

N	Կրթական ծրագիրը	Հաստատության տեսակը	Տարիքային խմբերը	Հանձնման կազմի մանրամասն թիվը	Ուսուցման լեզուն	Ուսուցման տևողությունը	Կրթության ձևը	Հաստատության շինությունների նպատակային նշանակությունը հարմարությունների ամբողջությամբ
Նախադպրոցական	Մասնագիտացված դպրոցներ	Տարատարիք (3-5 տարեկան)	30	Գրական հայերեն	1 տարի	Առկա	Անհատույց օգտագործում՝ 489.1 քմ.	
		Ավագ խումբ	30					

Գործողության ժամկետը՝ անժամկետ:
<< Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կրթության ոլորտում գործունեության թույլտվության պետ՝
(անձնագրություն)
Կ.Տ.
Ա. Աղշական
(Անուն, ազգանուն)
14 նոյեմբերի 2024թ.
(Ամիս, ամսաթիվ)
Ներդիրը վավերական է միայն գրիֆի առկայության դեպքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 2115-Ա/2 «14» Դեկտեմբերի 2024 թ.

«ԴԱՇՏԱՔԱՐԻ «ԳՏՆՎԱԾ ԵՐԱԶ» ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՏԱՐԱՏԱՐԻՔ (3-6 ՏԱՐԵԿԱՆՆԵՐ) ԽՈՒՄԲԸ ՏԱՐԱՏԱՐԻՔ (3-5 ՏԱՐԵԿԱՆՆԵՐ) ԽՄԲՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ, ԱՎԱԳ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԵՐԴԻՐ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 1017-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Կրթության մասին» օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 9-ի N 808-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 3-րդ, 5.1-րդ, 6-րդ և 8-րդ կետերի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Դաշտաքարի «Գտնված Երազ» նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության նախադպրոցական

կրթական ծրագրով՝ սովորողների համակազմի սահմանային 30 տեղերի թվով՝ տարատարիք (3-6 տարեկաններ) խումբը փոխարինել տարատարիք (3-5 տարեկաններ) խմբով, տալ գրական հայերենով ուսուցմամբ 1 տարի տևողությամբ, սովորողների համակազմի սահմանային 30 տեղերի թվով, ավագ տարիքային խմբով գործունեության թույլտվություն և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հուլիսի 6-ի «Դաշտաքարի «Գտնված Երազ» նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը նախադպրոցական կրթական ծրագրով գործունեության լիցենզիա տալու մասին» N 1017-Ա/2 հրամանի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի և տալ լիցենզիայի հերթական ներդիր:

2. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լիցենզավորման վարչության պետ Ա.Արշակյանին:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Սվաջյանին:

11/14/2024

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

3. ՍԱՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Ցուցանիշ	Այո	Ոչ
ա. ուսումնական հաստատության անձնակազմը և սաները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին.	✓	
բ. ուսումնական հաստատության անձնակազմը և սաները տեղեկացված են հաստատությունում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակ, հրշեջ-տեղեկատու, հրշեջ-ծորակ և այլն) գտնվելու տեղերի վերաբերյալ, իսկ անձնակազմը տիրապետում է դրանց օգտագործման կանոններին.	✓	
գ. հաստատությունում իրականացվում են տեղական նշանակության վտանգների գնահատման և աղետներին պատրաստվածության վերաբերյալ տարաբնույթ միջոցառումներ.	✓	
դ. ուսումնական հաստատությունում առկա է աղետներին պատրաստվածության, քաղաքացիական պաշտպանության պլան, և ուսումնական տարվա ընթացքում գործարկվում է պլանը, իրականացվում են վարժանքներ, վարվում է գրանցամատյան.	✓	
ե. ուսումնական հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով.	✓	
զ. ուսումնական հաստատության բոլոր խմբասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, և ջեռուցման ամիսներին խմբասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին.	✓	
է. ուսումնական հաստատության միջանցքները ջեռուցվում են, և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին.	✓	
ը. ուսումնական հաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով.	✓	
թ. ուսումնական հաստատության բոլոր խմբասենյակներում առկա են առանձնացված վերանորոգված սանհանգույցներ	✓	
ժ. ուսումնական հաստատության բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով (օճառ, թուղթ և այլն).	✓	

ժա. հաշմանդամություն ունեցող անձանց համար կա հարմարեցված սանհանգույց, որի մոտ առկա է հաշմանդամության տարբերանշանը.		✓
ժբ. ուսումնական հաստատությունում առկա է սննդի կազմակերպման կետ, որը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին.	✓	
ժգ.ուսումնական հաստատության սննդի կազմակերպման կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ.	✓	
ժդ. ուսումնական հաստատությունում առկա է բուժկետ, և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն.	✓	

Այս 14 չափանիշների ամբողջությունը հիմք է հանդիսանում հաստատության ինքնավերլուծության հաշվետվության այս բաժինը կազմելու համար: Առավել ընդգրկուն և համակողմանի վերլուծություն կատարելու համար յուրաքանչյուր չափանիշին պետք է անդրադառնալ առանձին, այնուհետև՝ ընդհանրացնել դրանք: Այս բաժնի վերլուծությունը կատարելիս պետք է ոչ միայն ուսումնասիրել համապատասխան ներքին փաստաթղթերի առկայությունը կամ կատարել դիտարկում-փաստագրում ըստ առանձին ցուցանիշների, այլ նաև հարցումներ կարելի է կատարել նաև ծնողների կամ այլ շահառուների շրջանում:

«գ» և «դ» չափանիշների դիտարկման-փաստագրման աշխատանքների արդյունքները գրանցվում են ստորև բերված աղյուսակում.

Հանձնաժողովի կազմի դիտարկման արդյունքում փաստագրում ենք, որ «Դաշտաքարի «Գտնված Երազ» նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի անձնակազմը և սաները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին, ինչպես նաև տեղեկացված են հաստատությունում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակ, հրշեջ-տեղեկատու, հրշեջ-ծորակ և այլն) գտնվելու տեղերի վերաբերյալ և անձնակազմը տիրապետում է դրանց օգտագործման կանոններին: Հաստատությունում իրականացվում են տեղական նշանակության վտանգների գնահատման և աղետներին պատրաստվածության վերաբերյալ տարաբնույթ միջոցառումներ: ՆՈՒՀ ՀՈԱԿ-ում առկա է աղետներին ԱՌԿ պլան, և ուսումնական տարվա ընթացքում գործարկվում է պլանը, իրականացվում են վարժանքներ, վարվում է գրանցամատյան: Ուսումնական հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով, բոլոր խմբասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, միջանցքները ջեռուցվում են, և ջեռուցման ամիսներին խմբասենյակներում և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին: Ուսումնական հաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով: Բոլոր խմբասենյակներում առկա են առանձնացված վերանորոգված սանհանգույցներ որոնք ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով (օճառ, թուղթ և այլն): Հաշմանդամություն ունեցող անձանց համար չկա հարմարեցված սանհանգույց:

Ուսումնական հաստատությունում առկա է սննդի կազմակերպման կետ, որը համապատասխանում է առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով

սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին, որտեղ փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ: Ուսումնական հաստատությունում առկա է բուժկետ, և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն:



Ամսաթիվը	Խումբը	Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագործված պարագաներն ու ուսումնական նյութերը	Մասնակից սաների և աշխատակիցների թիվը
11.07.2025թ	2	ԱՌԿ պլանի գործնական պարապմունքների սեմինար և դասախոսություն ՀՀ ՆԳՆ ՓԾ Արարատի ՄՓՎ մասնակցությամբ «Ազդարարում, տարհանում, պատսպարում» թեմայով:	62 սան 13 աշխատակից
25.11.2024թ	2	ԱՌԿ պլանի գործնական պարապմունք աշխատակազմի մասնակցությամբ «Արտակարգ դրության ժամանակ անհրաժեշտ գործողությունների կատարում» թեմայով:	64 սան 15 աշխատակից

«ժդ» չափանիշի դիտարկման-փաստագրման աշխատանքների արդյունքները ներկայացվում են ստորև բերված աղյուսակում.

Հաստատությունում առկա է բուժկետ						
Հաստատությունն ունի բուժաշխատող և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն (ընդգծել այո կամ ոչ բառերը)						
Այո						Ոչ
Բուժկետի գտնվելու հարկը և տարածքը 14,56 (քմ)	Բուժաշխա-տողներ (թիվը և նրանց պաշտոն-ները)	Բուժկետում առկա գույքը	Բուժկետը վերանորոգված է, թե ոչ.		Բուժկետի սանիտարական վիճակը	Առաջին բուժօգնության միջոցների և դեղերի առկայությունը
1-ին հարկ	1 բուժքույր	այո	Այո "	Ոչ	Լավ	այո

Ինքնավերլուծության այս բաժնի կարևորագույն բաղադրիչն է հաստատության քաղաքացիական պաշտպանության պլանի վերլուծությունը: Նման պլանի առկայությունը, ինչպես նաև դրանում նշված աղետներին պատրաստվածության, հակազդման իրատեսական մեխանիզմների ու միջոցառումների նկարագրությունը հաստատության անվտանգության և ապահովության կարևոր չափանիշներից է: Այս չափանիշին հաստատության համապատասխանության գնահատման նպատակով պետք է նշել, թե արդյոք հաստատությունը մշակել և հաստատել է իր քաղաքացիական պաշտպանության պլանը, ինչպես է իրագործվում այդ պլանը, ինչպես նաև նկարագրել քաղաքացիական պաշտպանության պլանից բխող սաների և աշխատակազմի հետ տարվա ընթացքում իրականացվող միջոցառումների և վարժանքների մասին: Կարևոր է նաև հիշատակել, թե արդյոք նախադպրոցական ուսումնական հաստատությունը վարում է իրականացվող վարժանքների և միջոցառումների գրանցամատյան:

«Դաշտաքարի «Գտնված Երազ» ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ը մշակել և հաստատել է իր քաղաքացիական պաշտպանության պլանը: Ըստ պլանի առաջնորդվելով կատարում է բացատրական, ուսումնական, փորձնական վարժանքներ, սաներին և աշխատակազմին վարժանքների ընթացքում պատրաստելով աղետներից պաշտպանվելու հնարները:

«Դաշտաքարի «Գտնված Երազ» նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը գտնվում է Արարատի մարզի Վեդի համայնքի բնակավայր Դաշտաքար 4–րդ փողոց 2 /1 հասցեում: ՆՈՒՀ ՀՈԱԿ—ը ունի 2 մասնաշենք, որը ունի 5 ելք, 2 մեծ սանհանգույց, 8 փոքրերի համար նախատեսված սանհանգույց:

Շենքը նորակառույց է, կառուցվել և շահագործման է հանձնվել 2019թ-ին, բարից է, սեյսմակայունությունը՝ 9 բալ է: Ընդհանուր տարածքի մակերեսը կազմում է 0,39 հա: Տարածքը պարսպապատված է և ունի 6 մետր լայնքով 2 դարպաս:

ՆՈՒՀ ՀՈԱԿ-Ի շինությունը սնվում է էլ. Սնուցման (գետնանցմամբ), գազի, ջրի և կապի կենտրոնացված ցանցից: Էլեկտրասնուցման վահանակները գործում են լավ: Շենքը ունի ներքին ջեռուցման համակարգ, մալուխային և խողովակաշարային գծերը գտնվում են լավ վիճակում: Աշխատանքը կազմակերպվում է մեկ հերթափոխով:

Հերթափոխ – 78 մարդ,

Կենտրոնը չի հանդիսանում հնարավոր հարձակման թիրախ, սակայն չի բացառվում, որ հակառակորդի հարձակման հետևանքով կարող են առաջանալ փլվածքներ՝ իրենց հնարավոր հետևանքներով, ինչպես նաև հրդեհներ:

Ավերվածությունների առաջացման ժամանակ, մինչև հիմնական ուժերի ժամանումը, կենտրոնը իր սեփական ուժերով կարող է կատարել փրկարարական աշխատանքներ: Գազի վթարի

և հրդեհի դեպքերում անհրաժեշտ է փակել գազի փականը, անջատել էլ. սնուցման վահանակը և տեղեկացնել համապատասխան ծառայություններին:

Հաստատությունը մշակել և հաստատել է իր ԱՌԿ պլանը, ըստ որի տարվա ընթացքում իրականացվել են միջոցառումներ և վարժանքներ: 11.07.2025թ. իրականացվել է «Ազդարարում, տարհանում, պատսպարում» միջոցառումը, որի նկարները կցված են վերևում.

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ա. Ղուկասյանի կողմից 2023թ-ի նոյեմբերի 7-ին հաստատվել է «Դաշտաքարի «Գտնված Երազ» նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-Ի ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ

[redacted]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

№ 93/11-171 «07» 11 2023թ.

ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի
Դաշտաքար բնակավայրի
«Դաշտաքարի «Գտնված Երազ» նախադպրոցական
ուսումնական հաստատություն»
ՀՈԱԿ-ի տնօրեն Ա.Մելքոնյանին

Հարգելի՛ տիկին Մելքոնյան

Արարատի մարզային փրկարարական վարչության կողմից ուսումնասիրվել է ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Դաշտաքար բնակավայրի «Դաշտաքարի «Գտնված Երազ» նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի քաղաքացիական պաշտպանության պլանը, որի վերաբերյալ առարկություններ և դիտողություններ չկան:

Հարգանքով՝

փ/ծ փոխգնդապետ՝ **Ա.Ղուկասյան**

Կատարող՝ ՀՀ ՆԳՆ ՔԾ Արարատի ՄՓՎ ԲՊ
բաժնի ավագ հրահանգիչ փ/ծ մայոր Զավեն Պողոսյան
Հեռ՝. 060-71-25-68

0701, ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23, Հեռ.՝ (0235) 2 22 46

[redacted]

4. ՍԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ, ՀՈԳԵՎՈՐ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Ցուցանիշ	Այո	Ոչ
ա. ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների կողմից իրականացվում են սաների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, կանխարգելման և հանրային քննարկման աշխատանքներ.	✓	
բ.ուսումնական հաստատությունն անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների միջոցով իրականացնում է սանի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատաս- խանատվության բարձրացման, ծնողավարման հմտությունների զարգացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ իրազեկման միջոցառումներ.	✓	

Ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների կողմից սաների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքեր չեն արձանագրվել: Նման դեպքերի բացառման և կանխարգելման նպատակով «Դաշտաքարի «Գտնված Երազ» նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի աշխատողների համար պարբերաբար կազմակերպվում են հոգեբանական թրեյնինգներ: Սանի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ծնողավարման հմտությունների զարգացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ իրականացվում են խորհրդատվություն և անհատական աշխատանքներ ծնողների հետ մանկավարժների կողմից՝ ըստ անհրաժեշտության:

Այս չափանիշների դիտարկման-փաստագրման աշխատանքների արդյունքները ներկայացվում են ստորև բերված աղյուսակում:

Ամսաթիվը	Խումբը	Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագործված պարագաներն ու ուսումնական նյութերը	Մասնակիցների թիվը
31.03.2025թ	Տարատարիք	Երեխաների ֆիզիկական և հոգևոր առողջություն	73
06.05.2025թ	Ավագ	Ծնող, դաստիարակ, մանկապարտեզ առողջ մթնոլորտի ձևավորում	73

5. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ

Ցուցանիշը	2022-2023	2023-2024	2024-2025	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Մանկավարժական աշխատողների ընդհանուր թիվը	2	3	5	աճ
Մանկավարժական աշխատողների միջին շաբաթական ծանաբեռնվա-ծությունը կամ դրույքաչափը	1,50	3,0	4,5	աճ

Վերլուծել մանկավարժական աշխատողների թվաքանակի, միջին ծանրաբեռնվածության փոփոխության պատճառները, կատարել եզրահանգումներ և առաջարկել հիմնախնդիրների լուծման ուղիներ:

Մանկավարժական աշխատողների թվականի և միջին ծանաբեռնվածությունը փոփոխություններ կատարվել է 2024թ-ի սեպտեմբերից, երբ «Դաշտաքարի «Գտնված Երազ» ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ում մանկավարժական հաստիքներից պարուսույցի հաստիքը համալրվեց, սակայն հաստատությունում դեռ կան մանկավարժական աշխատողի թափուր հաստիքներ, որոնց համար պարբերաբար հաստատությունը հայտարարում է մրցույթ:

Տվյալներ հաստատության վարչական կազմի վերաբերյալ

Պաշտոնը	Անունը, ազգանունը, հայրանունը	Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածը	Տվյալ հաստատությունում աշխատելու ժամանակահատվածը	Պետական պարգևները, կոչումները և այլն
Տնօրեն	Անի Մելքոնյան Վարուժանի	15.11.2019թ.	15.11.2019թ.	

Տվյալներ մանկավարժական խորհրդի կազմի վերաբերյալ

Անուն, ազգանուն, հայրանուն	Զբաղեցրած պաշտոնը	Կրթությունը		Պետական պարգևները, կոչումները և այլն
Անի Մելքոնյան Վարուժանի	Տնօրեն	Բարձրագույն	Մանկավարժական խորհրդի նախագահ	
Դիանա Խուդոյան Սմբատի	Դաստիարակ	Բարձրագույն	09.02.2023թ.	
Հասմիկ Խուդոյան Հունանի	Երաժշտ.դաստիարակ	Բարձրագույն	25.02.2025թ.	
Սյուզաննա Պետրոսյան Անդրանիկի	Դաստիարակ	Բարձրագույն	31.08.2024թ.	
Արևիկ Վարդանյան Վարդանի	Պարուսույց	Բարձրագույն	31.08.2024թ.	

Ցուցանիշ	
ա. մանկավարժական աշխատողներից քանիսն ունեն գիտական կոչում.	-
բ. մանկավարժական աշխատողներից քանիսն են վերջին 5 տարում վերապատրաստում անցել նախարարության կողմից երաշխավորված կազմակերպություններում.	2
գ. մանկավարժական աշխատողներից քանիսն են վերապատրաստվել որպես վերապատրաստող (դասախոս) և վարում են վերապատրաստման դասընթացներ.	-
դ. որքան է մանկավարժական աշխատողների միջին տարիքը.	36
ե. մանկավարժական աշխատողներից քանիսն ունեն միջազգային ու տեղական պարբերականներում(ամսագրերում) հրապարակված հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, ինչպես նաև մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժա- կան, հեղինակային և այլ աշխատություններ.	-
զ. մանկավարժական աշխատողներից քանիսն են ուսումնական գործընթացում կիրառում ժամանակակից տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ /ՏՀՏ/.	5
ը. որքան է մանկավարժական աշխատողների բացակայությունների ընդհանուր թիվը.	0

Տվյալներ հաստատության ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ

Ցուցանիշ	Այո	Ոչ
ա. սահմանված ժամկետում ձևավորվել է սաների համակազմը՝ ըստ տարիքային խմբերի	✓	
բ.ուսումնական հաստատությունում իրականացվում են մանկավարժական խորհրդի նիստեր և առկա է մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյան.	✓	
գ.ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպվում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին և տվյալ տարիքային խմբի ծրագրին (այդ թվում՝ կրթության պետական լիազոր մարմնի կողմից հաստատված հեղինակային և այլընտրանքային) համապատասխան.	✓	
դ.ուսումնական հաստատությունում ձևավորվել է ազգային փոքրամասնությունների երեխաների համակազմով խումբ և ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպվում է վերջիններիս մայրենի լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ.		✓
ե.մանկավարժական աշխատողները տիրապետում են ուսուցման ժամանակակից (երեխայակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ և այլ) մեթոդներին և գործնականում կիրառում դրանք.	✓	
զ. մեթոդիստը ցույց է տվել խորհրդատվական օգնություն մեթոդական, ուսումնական և դաստիարակչական աշխատանքներ կազմակերպելու համար, անցկացրել է բաց պարապմունքներ, սեմինարներ, սեմինար-պրատիկումներ.	✓	

է. մեթոդիստը վերահսկել է նախադպրոցական կրթական ծրագրի կատարումը.	✓	
ը.ուսումնական տարվա ընթացքում հաստատությունում անցկացվել են ցուցադրական բաց պարապմունքներ, իրականացվել նախագծեր. (Եթե այո, նշել՝ ծրագրային որ բաղադրիչների ուղղությամբ են անցկացվել և քանակը):	Անկախության տոնը՝ Սեպտեմբերի 21, Նոր Տարի Տյառն ընդառաջ, Սուրբ Զատիկ,Կանանց միջազգային օր, Մանկապարտեզից Դեպի...	
թ.ուսումնական տարվա ընթացքում հաստատությունից դուրս անցկացվել են պարապմունքներ. (Եթե այո, նշել՝ ծրագրային որ բաղադրիչների ուղղությամբ են անցկացվել և քանակը):	Տիկնիկային թատրոններ, Նաիրի և Մոսկվա կինոթատրոներ, պաղպաղակի արտադրության գործարանը: Երեխաների բարոյական և գեղագիտական դաստիարակությանը ուղված աշխատանքներ, նպատակն էր դաստիարակել բարոյակամային հատկանիշներ: Իրենց տարիքին համապատասխան դիտել են ուսուցողական, դաստիարակչական, մարդասիրական արժեքներ ձևավորող, բարոյական պատկերացումներ ամրապնդող մուլտֆիլմ, ֆիլմեր:	
ժ.ուսումնական տարվա ընթացքում անցկացվել են հաստատություններում՝ գրադարան, երաժշտական դպրոց. (Եթե այո, նշել՝ ծրագրային պարապ-մունքներ համայնքային ենթակայության այլ կրթական որ բաղադրիչների ուղղությամբ են անցկացվել և քանակը):	Կրթադաստիարակչական, նպատակային զբոսանք «Խոսրովի անտառ պետական արգելոց» թանգարան, որի նպատակն էր ծանոթանալ ճանաչել բնությունը, կարողանալ տեսնել խնամել և պահպանել գեղեցիկը, հոգ տանել մեր «Մեծ Մոլորակի» մասին: Հաստատության սաները այցելել են նաև «Վեդի համայնքի գրադարան» ուսուցողական մուտֆիլմ դիտել, հեքիաթի ընթերցում են լսել:	

EXIT

Pink Berry
14:30

Pink Berry

Վերլուծել նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների և նրանց գործունեությանը վերաբերող ցուցանիշները, դրանց փոփոխությունների դինամիկան և առկա հիմնախնդիրները: Կատարել եզրահանգումներ ու առաջարկել լուծումներ նրանց գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

«Դաշտաքարի «Գտնված Երազ» նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ում տարատարիք և ավագ տարիքային խմբերը, ձևավորվել է սահմանված ժամկետում: Յուրաքանչյուր եռամսակը մեկ անգամ՝ իրականացվում են մանկավարժական խորհրդի նիստեր և առկա է մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյան, անհրաժեշտության ելնելով հունվարին իրականացվել է արտահերթ նիստ:

Ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպվում է ըստ համալիր ծրագրի և զարգացման չափորոշիչների՝ համապատասխան տարիքային խմբերի պահանջներին: Հաշվի են առնվում երեխաների նախասիրությունները և անհատական ընդունակությունները: Ուսուցումը կատարվում է պարզից բարդ սկզբունքով: Ողջ մանկավարժական աշխատողները բարձրագույն կրթություն ունեն, տիրապետում են երեխայակենտրոն ժամանակակից ուսուցման ձևերին ըստ զարգացմնան չափորոշիչների և աշխատանքները կազմակերպվում են ըստ այդմ:

Անցկացվել են եռամսյակային ամփոփիչ պարապմունքներ և սեմինարներ: Իրականացվում է ամենօրյա, ինչպես նաև, թեմատիկ, օպերատիվ, հանրագումարային վերահսկողություն կրթական ծրագրեի իրականացման ուղղությամբ:

2024-2025 ուսումնական տարվա ընթացքում հաստատությունում անցկացվել են ցուցադրական բաց պարապմունքներ՝ Անկախության տոնը՝ Սեպտեմբերի 21, Նոր Տարի, Տյառն ընդառաջ, Սուրբ Զատիկ,Կանանց միջազգային օր, ՀՀ առաջին հանրապետության հրչակման օր, Մանկապարտեզից դեպի… խորագրերով: Ուս. տարվա ընթացքում հաստատությունից դուրս անցկացվել է միջոցառումներ՝ այցելել ենք տիկնիկային թատրոններ, Նաիրի և Մոսկվա կինոթատրոներ, Վարդանյաների այգի, բնության գրկում անցկացվել է բաց պարապմունք:

6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՆՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ցուցանիշ	Այո	Ոչ
ա. ուսումնական հաստատությունն ունի մեթոդկաբինետ, որը հագեցած է n գույքով և սարքավորումներով:	✓	
բ. ուսումնական հաստատությունն ունի ✓ մարզադահլիճ, ✓ միջոցառումների անցկացման դահլիճ ✓ այլ հատուկ ուսումնական խմբասենյակներ (սենյակներ), այդ թվում՝ լրացուցիչ կրթական ծրագրերի համար (նկարչական խմբակ և այլն), որոնք հագեցած են անհրաժեշտ գույքով, ուսումնական պարագաներով, և ուսումնադիդակտիկ նյութերով.	✓	

Տարատարիք խումբ	Սեղան-6հատ	Աթոռ-30հատ	Մահճակալ-30 հատ	Գրապահարան 3 հատ

Կից՝ նկարներ և գույքի հագեցվածության ցուցակներ:

Մարզագույքի ցուցակ.

Շվեդական պատ S6- 1 հատ
Բասկետբոլի օղակ - 2 հատ
Օղակներ -15 հատ
մեծ և փոքր գնդակներ - 60 հատ:
Բռնցքամարտի տանձ – 1 հատ
Փափուկ մոդուլների հավաքածու «Կոկորդիլոս»- 1 հատ
Գորգ «Կլասսիկի» -1 հատ
Փափուկ մոդուլ «Շագայկա» -1 հատ
Մատրասներ
Չոր ավազան

Բակային տարածք	Կանաչապատ բակ, տաղավարներ	Կառուսելների տարբեր տեսակներ	
Մեթոդկաբինետ	1-սեղան 1-պահարան 1-աթոռ 1-համակարգիչ	գրականություն, Նախաշավիղներ, Դիդակտիկ պարագաներ, խաղեր, պաստառներ	Ժողովրդական հեքիաթներ, Հ. Թումանյանի, Ղ.Աղայանի հեքիաթներ:

FCN
FCN
FCN

ԲԺՇԿ
ԱԾՈՒՆ
Սեպտեմբեր
1 Սեպտեմբերի
Գիտելիքի և լուսավորության օր
Հոկտեմբեր
Նոյեմբեր

MAGIC MAGNETC
Charlie AND THE CHOCOLATE FACTORY
ԴԵՂԱՏՈՒՓ
ԲԺՇԿԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԼՈՏՈ
ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՄՏԱԾԵԼ
#XAXALOVE
ԳԵՂԱՐՎԵՍՏԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Աա Բբ Գգ Դդ Եե Զզ Էէ Ըը Թթ
Ժժ Իի Լլ Խխ Ծծ Կկ Հհ Ձձ Ղղ
Ճճ Մմ Յյ Նն Շշ Ոո Չչ Պպ Ջջ
Ռռ Սս Վվ Տտ Ռր Ցց Ուու Փփ Քք

7. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏՆՕՐԻՆՈՒՄ

Ցուցանիշ		2021-2022 ուս.տարի	2022-2023 ոսւ.տարի	2024-2025 ուս.տարի
ա. սան - մանկավարժ հարաբերությունը.	Սան / Մանկավարժ	30/3	60/4	60/4
բ. սան - սպասարկող անձնակազմ հարաբերությունը.	Սան / Սպաս. անձնակազմ.	30/6	60/8	60/9
գ. սան - վարչական անձնակազմ հարաբերությունը.	Սան / Վարչ. անձնակազմ	30/2	60/2	60/1
դ. խմբերի միջին խտությունը.		30	30	30
ե. մեկ սանի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը.		420	428	455
զ. մանկավարժի միջին աշխատավարձը.		137.5	137.5	137,5
Է. վարչական աշխատողների միջին աշխատավարձը.		150.0	150,0	150, 0
ը. սպասարկող կազմի միջին աշխատավարձը.		105,0	105,0	105, 0
թ. հաստատության տարեկան նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը.		-	-	-
ժ. ծնողների կողմից դրամական ներդրումների տարեկան չափը.		0	0	0
ժա. սոցիալապես անապահով ընտանիքներից սաների համար հաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերը և դրանց թիվը. *(Եթե այո, ապա նշել այդ ծրագրերը):*		0	0	0
ժբ. դրամաշնորհային և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ներդրումների տարեկան չափը.		0	0	2525,7
ժգ. աշխատավարձերի վճարման գծով հաստատության		11,000	17,550	18,300

տարեկան ծախսերի չափը.			
ժդ. կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան ծախսերի չափը.	450,0	660,0	680,0
ժե. նոր գույքի, այդ թվում՝ սարքավորումների ձեռքբերման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը.	420,0	300,0	350,0

Հաստատությունում ֆինանսական և նյութական ռեսուրսները մեր գնահատմամբ արդյունավետ են տնօրինվել:

Խմբերի թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուս տարիների համար

Խմբերի թիվը	2022-2023	2023-2024	2024-2025	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Վաղ տարիքի I	-	-	-	-
Վաղ տարիքի II	-	-	-	-
Կրտսեր I	-	-	-	-
Կրտսեր II	-	-	-	-
Միջին	-	1	-	-
Ավագ	-	-	1	100 %
Տարատարիք	1	1	1	100 %
Ազգային փոքրամասնությունների երեխաների համակազմով ձևավորված խումբ	-	-	-	-
Ընդամենը՝	1	2	2	Աճ

Այս և հաջորդող բոլոր աղյուսակներում անհրաժեշտ է նկարագրել փոփոխությունների դինամիկան՝ մեկնաբանել աճի կամ նվազման պատճառները:

«Դաշտաքարի «Գտնված Երազ» ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ում դիտվել է փոփոխությունների դինամիկ աճ 100 %-ով : Ընդունելությունը իրականացվել է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ 11.10.2021 թվականի N76Ն հրամանի կարգի՝ հաշվի առնելով առաջնահերթության սկզբունքները:

Ըստ խմբի սաների թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուս. տարիների համար

Սաների թիվը	2022-2023	2023-2024	2024-2025	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Վաղ տարիքի I	-	-	-	-
Վաղ տարիքի II	-	-	-	-
Կրտսեր I	-	-	-	-
Կրտսեր II	-	-	-	-
Միջին	-	30	-	-
Ավագ	-	-	30	Աճ
Տարատարիք	30	30	30	Աճ
Ազգային փոքրամասնությունների երեխաների համակազմով ձևավորված խումբ	-	-	-	-
Ընդամենը՝	30	30	60	Աճ

Ընդհանուր տվյալներ սաների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուս տարիների համար

Ցուցանիշ	2022-2023	2023-2024	2024-2025	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Սաների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝	30	60	60	աճ
Սաների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուս.տարվա օգոստոսի 20-ի դրությամբ	30	60	60	աճ
Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սաների թիվը	20	30	30	աճ
Ուսումնական տարվա ընթացքում սաների բացակայությունների միջին թիվը	55	200	250	աճ
Ուսումնական տարվա ընթացքում ազատված սաների թիվը	20	21	26	աճ

Վերլուծել սաների թվաքանակի փոփոխության պատճառները, կատարել եզրահանգումներ և առաջարկել հիմնախնդիրների լուծման ուղիներ:Այժմ տարատարիք խմբում երեխաների թիվը 30 է, Ավագ խմբում 30, ԿԳՄՍՆ-ի կողմից սահմանված քանակով: Աճել է ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի օնլայն համակարգում հերթագրվողների թիվը: Այժմ հերթագրվածների ընդհանուր թիվը 45 է:

8. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԵՏ

Ցուցանիշ			2022-2023 ուս.տարի	2023-2024 ուս,տարի	2024-2025 ուս. տարի
ա. սաների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից գրավոր ներկայացված առաջարկությունները, դրանց թիվը և ընդունված առաջարկությունների տոկոսը ներկայացվածի նկատմամբ.	Թիվը / Տոկոսը		11/40%	11/40%	12/42%
բ. ծնողական խորհրդի կողմից կազմակերպված միջոցառումները (հանդեսներ, հավաքներ, երեկույթներ,էքսկուրսիաներ, ճանաչողական այցեր և այլն), դրանց թիվը, մասնակից ծնողների թիվը և սաների տոկոսը.	Թիվը / Տոկոսը		9/95%	11/95%	14/92%
գ.ծնողական խորհրդի կազմում ԿՁԱՊԿ ունեցող սաների ծնողների թիվը եւ տոկոսը	Թիվը / Տոկոսը		0	1/2%	1/2%
դ. ծնողական խորհրդի կողմից հաստատության գործունեության վերաբերյալ ներկայացված կարծիքը քննարկվում է աշխատակիցներին խրախուսելու կամ նրանց նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու ժամանակ.	Այո ✓	Ոչ			
ե. ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը և դրանց ընթացքում քննարկված հարցերի շրջանակները.	Ողջ տարվա ընթացքում հադիպումները 5-ն են եղել: Ծնողների հետ քննարկվել են մանկապարտեզի օրվա ռեժիմը, ծնողների պարտավորությունները: Կազմակերպվել է քննարկում երեխաների բարոյահոգեբանական մթնոլորտի վերաբերյալ, և ծնողների հետ քննարկվել են դրա շուրջ տարվող աշխատանքները, ինչպես նաև ընթացիկ հարցերը:				
զ. ուսումնական հաստատության առօրյայից և տեղի ունեցող իրադարձություններից ծնողների	Ծնողները մշտապես տեղեկացվում են երեխաների՝ կրթադաստիարակչական աշխատանքների, սննդակարգի և առօրյայի մասին: Մշտապես մանկապարեզ ծնող կապը ամուր է պահված:				

տեղեկացվածության աստիճանը.	
Է. այն ծնողների տոկոսը, որոնք օգտվում են նախարարության, համայնքի, հաստատության և կրթական այլ կայքերից:	80%

9. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ցուցանիշ	
ա. ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնանյութական բազայի համալրման և այլ աշխատանքներին համայնքի մասնակցությունը, այդ գործում կատարված ներդրումները. *(Նկարագրել համայնքի մասնակցության դեպքերը, մասնակցության ձևը, ներդրման չափը, ամսաթիվը).*	Ուսումնական հաստատության շենքը նորակառույց է: Հիմնականում նորոգելու և կառուցելու խնդիր շինությունը չունի: Կան հանգստի տաղավարի կառուցման խնդիր որը ընթացքում իր լուծումը կստանա:
բ.համայնքային հիմնախնդիրների վերաբերյալ հաստատության աշխատակազմի տեղեկացվածությունը և նրանց մասնակցությունը համայնքի աշխատանքներին, մասնակցության ձևերը, մասնակցություն ունեցած աշխատակիցների տոկոսը. *(Նկարագրել հաստատության աշխատակազմի մասնակցությունը համայնքի աշխատանքներին, մասնակցության ձևերը, մասնակցություն ունեցած աշխատակիցների տոկոսը (վերջին 3 տարում).*	Համայնքում առաջացած խնդիրների վերաբերյալ աշխատակազմը տեղեկացվում է: Անհրաժեշտության դեպքում իրականացվում են աշխատանքներ: Վեդի համայնքի ղեկավարը և աշխատակազմի անդամները, մշտապես ուշադրության կենրոնում են պահում հաստատության առջև ծառացած խնդիրները համագործակցության շնորհիվ բոլոր խնդիրներին տալիս են հրատապ և ճիշտ լուծումներ:
գ. ուսումնական հաստատության կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված ու անցկացված միջոցառումները և դրանց թիվը, մասնակից սաների և ծնողների տոկոսը և համայնքի ներկայացուցիչների թիվը. *(Նկարագրել հաստատության կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված միջոցառումները, մասնակից սաների տոկոսը և համայնքի ներկայացուցիչների թիվը. (վերջին 3 տարում).*	Համայնքի ծնող-բնակիչները մասնակցում են մանկապարտեզում կազմակերպվող միջոցառումներին:
դ.ուսումնական հաստատության կողմից հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացված կրթական ծրագրերը, դրանց թիվը և մասնակիցների թիվը՝ ըստ ծրագրերի. *(Նկարագրել կրթական ծրագրերը, որոնք իրականացնում են հաստատությունը և ՀԿ-ները համատեղ, ծրագրի տևողությունը, թիվը, մասնակից սաների և աշխատակիցների թիվ).*	Ուսումնական հաստատությունը համագործակցում է ԿԶՆԱԿ, ՏՄԱԿ կազմակերպությունների հետ:
ե.ուսումնական հաստատությունը համագործակցում է իրեն սպասարկող Տարածքային մանկավարժահոգեբանական	Ուսումնական հաստատությունը համագործակցում է ԿԶՆԱԿ, ՏՄԱԿ, Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն ՊՈԱԿ-ի հետ՝ կրթության առանձնահատուկ պայմանների

կենտրոնի հետ.	կարիք ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքների կազմակերպման նպատակով:
զ.ուսումնական հաստատությունը համագործակցում է համայնքում գործող բժշկական հաստատության հետ՝ ԿԶԱՊԿ ունեցող երեխաների հայտնաբերելու եւ ն/դ կրթության մեջ ներգրավելու նապատով.	Ուսումնական հաստատությունը համագործակցում է համայնքում գործող բժշկական հաստատության հետ: ԿԶԱՊԿ ունեցող երեխաների բացահայտման և նրանց կրթության կազմակերպման նպատակով ուսումնական հաստատությունը համագործակցում է Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի հետ:
Է.ուսումնական հաստատությունը համագործակցում է համայնքի հանրակրթական դպրոցների հետ՝ իր սաների սահուն անցումը կրթական հաջորդ մակարդակ ապահովելու նպատակով.	Ուսումնական հաստատությունը համագործակցում է Դաշտաքարի միջնակակարգ դպրոցի հետ՝ դպրոցահասակ երեխաների մանկապարտեզից դպրոց սահուն անցումը կազմակերպելու նպատակով:

10. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ցուցանիշ	Կատարել նշում համապատասխան փաստաթղթի, միջոցառման և գույքի առկայության մասին.
ա. ուսումնական հաստատությունում բոլոր սաների համար հասանելի եւ հավասարապես որակյալ կրթության կազմակերպման նպատակով հաստատության տարեկան պլանում սահմանված են գործողություններ. *(Եթե այո, ապա կատարել հղում).*	Ըստ տարեկան պլանի մանկապարտեզում, բոլոր սաների համար հավասարապես հասանելի է որակյալ կրթություն, որը ապահովվում է համաձայն տարեկան աշխատանքային պլանի:
բ. ուսումնական հաստատության տարեկան աշխատանքային պլանում ներկայացված են ԿԶԱՊԿ ունեցող սաների կրթության կազմակերպման որակի բաձրացմանը նպաստող միջոցառումներ, այդ թվում՝ մանկավարժների, դաստիարակների օգնականների վերապատրաստումներ. *(Եթե այո, ապա թվարկել համապատասխան միջոցառումները).*	ԿԶԱՊԿ ունեցող սաների կրթությունը արդյունավետ դարձնելու նպատակով մանկավարժները, տնօրենը հանդիպումներ են կազմակերպում ծնողների հետ, վեր հանում նրանց անհանգստացնող խնդիրները և ըստ այդմ իրականացնում են համապատասխան միջոցառումներ:
գ.վերջին հինգ տարում մանկավարժական աշխատողները մասնակցել են վերապատրաստումների, այդ թվում՝ «Համընդհանուր ներառական կրթություն» թեմայով. *(Եթե այո, ապա նշել վերապատրաստող կազմակերպությունը, վերապատրաստման ամսաթիվը և տևողությունը ժամերով, ինչպես նաև մեկնաբանել դրա արդյունավետությունը).*	Հաստատության մանկավարժական աշխաողներից երկուսը 2024-2025 ուս. տարում անցել են պարտադիր մանկավարժական աշխատողի վերապատրաստում «Երևանի պետական մանկավարժական համալսարան»-ում:
դ. վերջին հինգ տարում ներառական կրթության թեմաներով վերապատրաստում անցած դաստիարակների օգնականների թիվը. *(Եթե այո, ապա նշել վերապատրաստված դաստիարակի օգնականների թիվը).*	Դաստիարակի օգնականի վերապատրաստում կատարվել է 2024թ-ին ՏՄԱԿ կազմակերպության կողմից, և վերապատրաստումը ունի շարունակական բնույթ

11. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԿԶԱՊԿ ՈՒՆԵՑՈՂ ՍԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ . ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄԸ ՆՐԱՆՑ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ

Ցուցանիշ	Կատարել նշում համապատասխան փաստաթղթի և գույքի առկայության մասին
ա. ուսումնական հաստատությունում ամենուրեք (խմբասենյակներ, դահլիճներ, գրադարաններ և այլն)տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձանց համար ապահովված է ֆիզիկական մատչելիություն. *(Եթե այո, ապա նկարագրել ինչպիսի պայմաններ են ստեղծված տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձնաց համար ֆիզիկական մատչելիության ապահովման համար).*	Հաստատությունը հարմարավետ է տեղաշարժման խնդիրներ ունեցողների համար: Հենաշարժողական համակարգի խնդիրներ ունեցող սաներ մանկապարտեզում դեռ չկան:
բ. ուսումնական հաստատությունն ունի ԿԶԱՊԿ ունեցող սաների մանկավարժահոգեբանական աջակցության թիմ (հատուկ մանկավարժ, սոցմանկավարժ, հոգեբան և այլն). *(Եթե այո, ապա թվարկել հոգեբանամանկա վարժական աջակցության հաստիքները, նշել ինչպես է կազմակերպվում նրանց աշխատանքը: Նկարագրել նաև ներառականության ուղղությամբ համապատասխան աշխատողների պարտակա-նությունների շրջանակը, կրթության և զարգացման առանձնահատուկ պայմաններ կարիք ունեցող սաների հետ վարվող աշխանքները, լրացուցիչ հաստիքների կարիքը և այլն: Հաշվարկել մանկավարժա-հոգեբանական աջակցության թիմի աշխատակիցների թվի հարաբերակցությունը ԿԶԱՊԿ ունեցող սաների թվին):*	Մանկապարտեզում չկա հատուկ մանկավարժ, սոց. Մանկավարժ, լոգոպեդ և հոգեբան: Տնօրենը և դաստիարակները իրականացում են աջակցող որոշակի միջոցառումներ: Ծնողներին տրվում է խորհրդատվություն՝ ըստ անհրաժեշտության: Հոգեբանի և հատուկ մանկավարժի հաստիքների անհրաժեշտություն կա: Հաստատությունը համագործակցում է ՏՄԱԿ կազմակերպության հետ:
գ. ԿԶԱՊԿ ունեցող սաներն ապահովված են ֆիզիկական և ճանաչողական զարգացման համար անհրաժեշտ խաղային նյութերով, պիտույքներով, հարմարանքներով, այլ պարագաներով. *(Եթե այո, ապա թվարկել, թե ինչ ուսումնամեթոդական նյութեր ունի հաստա-տությունը ԿԶԱՊԿ ունեցող սաների համար, դրանց քանակը, ձեռք բերման տարեթիվը, ֆիզիկական վիճակը, օգտագործման հաճախականությունն ու արդյունավետությունը և այլն: Նշել նաև լրացուցիչ սարքավորումների և ուսումնամեթոդական նյութերի կարիքը).*	Խմբերն ապահովված են անհարժեշտ խաղային, ուսումնական պիտույքներով: Պարբերաբար կատարվում է նյութերի ավելացում և թարմացում:

դ. ուսումնական հաստատության խմբասենյակների դասավորվածությունն այնպիսին է, որ ԿԶԱՊԿ ունեցող սաները մեկուսացված չեն. (Եթե այո, ապա նկարագրել կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների համար կրթության և խնամքի կազմակերպման պայմանները, խմբասենյակների դասավորվածությունը).	Դժվար է, բայց ԿԶԱՊԿ ունեցող ունեցող երեխաները մեկուսացված չեն իրենց խմբերից:
ե. ուսումնական հաստատությունն ունի ռեսուրս-սենյակ՝ ԿԶԱՊԿ ունեցող սաների հետ իրականացվող անհատական եւ խմբային աշխատանքների համար. (Եթե այո, ապա նկարագրել կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների համար նախատեսված ռեսուրս-սենյակի ֆիզիկական վիճակը, չափերը, հագեցվածությունը սարքավորումներով, սենյակի օգտագործման հաճախականությունը: Նշել նաև լրացուցիչ սարքավորումների և ուսումնամեթոդական նյութերի կարիքը).	Մանկապարտեզը չունի ռեսուրս սենյակ ԿԶԱՊԿ ունեցող սաների հետ իրականացվող անհատական եւ խմբային աշխատանքների համար:

12. ԿԶԱՊԿ ՈՒՆԵՑՈՂ ՍԱՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.

Ցուցանիշ	Կատարել նշում համապատասխան փաստաթղթի առկայության մասին
ա. անհատական ուսուցման և զարգացման պլանները մշակվում են՝ համաձայն նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի և նախադպրոցական կրթական ծրագրերի՝ հաշվի առնելով սաների կարիքները, ընդունակությունները, հնարա- վորությունները, ձեռքբերումները և առաջընթացը. *(Եթե այո, ապա մանրամասնել).*	Ծնողների հետ համագործակցելով՝ անհատական ուսուցման և զարգացման պլանների մշակման և կատարման ընթացքում գրանցվում են որոշակի հաջողություններ:
բ.մանկավարժները գիտակցում են ներառականության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների միջոցով իրականացնում են իրազեկման եւ կարծրատիպերի կոտրմանն ուղղված աշխա- տանքներ. *(Մանկավարժների դիրքորոշումը պարզելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներ մանկավարժների, սպասարկող և վարչական անձնակազմերի, ինչպես նաև ծնողների շրջանում).*	Մանկավարժների հետ տարվող աշխատանքների արդյունքում չկա կարծրատիպային մոտեցումներ: Մանկավարժները իրենց հերթին աշխատանքներ են տանում խմբում երեխաների և ծնողների հետ:
գ. մանկավարժներն ունեն հավասար վերաբերմունք բոլոր սաների նկատմամբ՝ անկախ նրանց միջև եղած տարբերություններից և առանձնահատկություններից. *(Մանկավարժների վերաբերմունքը պարզելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներ մանկավարժների, սպասարկող և վարչական անձնակազմերի, ինչպես նաև ծնողների շրջանում).*	Մանկավարժական աշխատողները կիրառում են իրենց բոլոր ջանքերն ու գիտելիքները հավասար վերաբերմունք ցուցաբերելու բոլոր սաների նկատմամբ:
դ. մանկավարժները կարողանում են կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ կամ երևույթ հայտնաբերել և ուսումնական նյութերում և հաղթահարել նույնիսկ սեփական վարքագծում. (Ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը հայտաբերելու և հաղթահարելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներ մանկավարժների, սպասարկող և վարչական անձնակազմերի, ինչպես նաև ծնողների շրջանում):	Կարծրատիպերի հայտնաբերման դեպքերում տարվում են աշխատանքներ, որոնք տալիս են իրենց ցանկալի արդյունքները:

13. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԶԱՊԿ ՈՒՆԵՑՈՂ ՍԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

Ցուցանիշ	2022-2023 ուս.տարի	2023-2024 ուս.տարի	2024-2025 ուս.տարի
ա. ուսումնական հաստատության այն սաների թիվը և տոկոսը, որոնք ունեն ԿԶԱՊԿ.	2/7%	2/3%	1/1%
բ. ԿԶԱՊԿ ունեցող սաների բացակայությունների տարեկան միջին թիվը՝ օր/սան.	15/5%	15/20%	26/20%
գ. լրացուցիչ կրթական ծրագրերում ներառվող՝ ԿԶԱՊԿ ունեցող սաների թիվը և տոկոսը.	2/7%	2/3%	1/1%

14. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԵՌԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ցուցանիշ	2022-2023 ուս.տարի	2023-2024 ուս.տարի	2024-2025 ուս.տարի
ա. սեռերի հարաբերակցությունը	15 արական 15 իգական	34 արական 26 իգական	32 արական 28 իգական
բ. ուսումնական հաստատությունում ընդգրկված ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը և տոկոսը.	2	2	1